

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՄԱՍՆԱՎՈՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՎԱՀՐԱՄ ԱՎԵՏԻՍՅԱՆ

«Հանրային իրավունք» և «մասնավոր իրավունք» եզրույթներն առաջին անգամ հիշատակել է հռոմեացի պատմիչ Տիտոս Լիվիոսը 1-ին դարում: Նա, հավանաբար օգտվելով արդեն իսկ ձևավորված իրավական ավանդույթներից, 12 աղյուսակների օրենքներն անվանում էր հռոմեական հանրային և մասնավոր իրավունքների աղբյուր¹: Այնուհետև երրորդ դարում հռոմեացի իրավաբան Ուլպիանոսը փորձեց տեսականորեն բանաձևել և տարանջատել «հանրային իրավունք» (jus publicum) և «մասնավոր իրավունք» (jus privatum) եզրույթները², բայց և այնպես հանրային և մասնավոր իրավունքի սահմանազատման կամ դրանց հարաբերակցության հարցը ինչպես նախկինում, այնպես էլ այժմ շարունակում է մնալ իրավագիտության տեսական-իրավական առավել բարդ խնդիրներից մեկը:

Հռոմեական իրավունքով տրված այս դասակարգումը հետագայում ընդունեցին զարգացած տնտեսություն ունեցող բոլոր երկրները, բացի Խորհրդային Միությունից: Վ. Լենինի կողմից հռչակված էր սկզբունք, ըստ որի՝ իրավունքի բնագավառում իրենք ոչ մի մասնավոր շահ չեն ճանաչում: Մասնավոր շահին տրվում էր հանրային իրավական բնույթ՝ այն դիտելով որպես պետության շահ:

Ներկայումս, հետխորհրդային հանրապետությունների տարածքում, շուկայական հարաբերությունների հաստատման և զարգացման գործընթացին զուգահեռ, ընթանում է իրավական համակարգերը հանրայինի և մասնավորի տարանջատելու ակտիվ գործընթաց, որը անհնար է արդյունավետ իրացնել առանց տեսական և գիտական հիմքի:

Հետխորհրդային հանրապետություններում նախորդ դարում ընթացած սոցիալ-տնտեսական ցնցումները պահանջեցին համապատասխան իրավական փոփոխություններ: Արտադրության հիմք հանդիսացող հանրային սեփականության գերիշխման պայմաններում իրավունքի համակարգում գերիշխում էր հանրային իրավունքը, իսկ ներկայիս արտադրության հիմք հանդիսացող մասնավոր սեփակա-

¹ Տե՛ս **Новицкий И. Б.** Основы римского гражданского права. М., 2000, էջ 17:

² Տե՛ս նույն տեղը, էջ 3:

նության պայմաններում՝ մասնավոր իրավունքը³:

Հարկ է նշել, որ թեև արևմտյան մի շարք երկրներում հանրային և մասնավոր իրավունքների տարանջատման և դրանց հարաբերակցության խնդիրը ունի ուսումնասիրվածության բավականին երկար պատմություն, բայց և այնպես այն այդ երկրներում ևս դեռևս չի կորցրել իր արդիականությունը⁴, իսկ հետխորհրդային երկրներում միայն վերջին շրջանում է, ինչ սկսել են կատարվել այս խնդրին նվիրված հետազոտություններ, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում դրա ուսումնասիրությանը նվիրված ամբողջական հետազոտությունները բացակայում են: Բայցի այդ, օրենսդրորեն հստակ սահմանված չէ հանրային իրավունքի և մասնավոր իրավունքի կողմից կարգավորվող հասարակական հարաբերությունների շրջանակը, իսկ գործող և նոր ձևավորվող հասարակական հարաբերությունների բազմազանությունը և բարդ բնույթը անհրաժեշտություն են առաջացնում այդպիսիք դասել կա՛մ մասնավոր, կա՛մ հանրային իրավունքի շարքին: Դա հանգեցնում է նրան, որ անհրաժեշտ է գտնել իրավունքի ճյուղերի ընդհանրությունների և տարբերությունների նոր սահմաններ, ինչը թույլ կտա լիարժեք օգտագործել իրավունքի համակարգման հնարավորությունները արդյունավետ իրավակարգավորումներ կիրառելու համար⁵:

Նախքան Հայաստանի Հանրապետությունում մասնավոր իրավունքի զարգացման խնդիրներին անդրադառնալը փորձենք բանաձևել մասնավոր իրավունքի հասկացությունը և ներկայացնել դրան բնորոշ հատկանիշները:

Մեր կարծիքով, մասնավոր իրավունքը իրավական նորմերի ամբողջություն է, որ հասարակական հարաբերությունների կարգավորման մասնավոր, իսկ երբեմն նաև հանրային մեթոդների հիման վրա կարգավորում է գույքային ինքնուրույնություն ունեցող, ֆորմալ առումով իրավահավասար սուբյեկտների կամահայտնությամբ առաջացող գույքային և ոչ գույքային, ինչպես նաև դրանց հետ կապված կազմակերպակառավարչական հարաբերությունները⁶:

³ Տե՛ս **Яковлев В. Ф.** Проблемы частного права в современных условиях // "Журнал российского права", 2016, № 1, էջ 6:

⁴ Առավել մանրամասն տե՛ս **Hanoch Dagan**, *Autonomy and Pluralism in Private Law*, Oxford Handbook of the New Private Law, 2019, **Kit Barker, Karen Fairweather, Ross Grantham**, *Private Law in the 21st Century*, Hart Publishing, 2017, **Kit Barker, Darryn Jensen**, *Private Law: Key Encounters with Public Law*, Cambridge University Press, 2013, **William Lucy**, *Philosophy of Private Law*, Oxford University Press, 2007 և այլն:

⁵ Տե՛ս **Гусев А. А., Викторов В. Ю., Жаров В. А.** Проблемы публичного и частного права в трудах современных ученых // "Инновационная наука", 2016, № 5-2 (17), էջ 214-216:

⁶ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Վ. Դ. Ավետիսյան**, Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2013, էջ 9-37:

Մասնավոր իրավունքին բնութագրական են հետևյալ հատկանիշները.

1. մասնավոր իրավահարաբերությունների մասնակցության ազատ կամահայտնությունը, որը իրականացվում է կարգավորման պայմանագրային ձևերի կիրառմամբ,

2. մասնավոր շահերի բավարարման ուղղվածությունը,

3. դիսպոզիտիվ նորմերի գերակշռումը⁷,

4. կողմերի ֆորմալ իրավահավասարությունը:

Փաստորեն, մասնավոր իրավունքը ազատ կամահայտնությամբ և սեփական նախաձեռնությամբ գործելու հարաբերությունների ոլորտն է, ոլորտ, որի զարգացման ուղենիշը անխզելիորեն կապված է մասնավոր սեփականության, սեփականության անձեռնմխելիության և դրա պաշտպանության երաշխիքների հետ: Մասնավոր իրավունքի գաղափարը չի կարելի քննարկել հանրային իրավունքի գաղափարից անջատ, քանզի մեկի բացառումը կհանգեցնի մյուսի բացառման⁸:

ՀՀ մասնավոր իրավունքը ներառում է քաղաքացիական, առևտրային, միջազգային մասնավոր, կորպորատիվ, ընտանեկան և աշխատանքային իրավունքները: Հարկ է նշել, որ նշված իրավահարաբերությունները կարգավորող իրավական ակտերը իրենց բովանդակությամբ միայն «մաքուր» մասնավոր հարաբերություններ կարգավորող ակտեր չեն, այլն պարունակում են հանրային իրավունքին բնորոշ իրավակարգավորումներ, ինչը երբեմն դժվարացնում է հանրային և մասնավոր իրավունքի սահմանազատումը, իսկ առանց զիտահենք իրավական քաղաքականության օրենսդրական փոփոխությունների ընդհանրապես անհնար է դրանց սահմանազատումը:

Անդրադառնանք Հայաստանի Հանրապետությունում մասնավոր իրավունքի զարգացմանը վերաբերող խնդիրների քննարկմանը: Առաջին հայացքից կարող է տպավորություն ստեղծվել, թե պետք է անդրադարձ կատարվի մասնավոր իրավունքի տարբեր ճյուղերին առնչվող հսկայածավալ հիմնախնդիրներին, սակայն մենք նման նպատակ չենք հետապնդում, քանի որ այդ խնդիրները իրավունքի տարբեր ճյուղերի նեղ մասնագետների կողմից ենթարկվել, ենթարկվում և դեռ ենթարկվելու են համապարփակ հետազոտության: Այստեղ քննարկելու ենք այնպիսի խնդիրներ, որոնք համընդհանուր բացասական ազդեցություն ունեն Հայաստանի Հանրապետությունում մասնավոր իրավունքի զարգացման, տեսության ոլորտում մասնավոր իրավունքի առանձին

⁷ Տե՛ս **Анциферова Э. Ю.** Принципы разумности, добросовестности и справедливости как основополагающие категории частного права // "Вестник Марийского государственного университета". Серия "Исторические науки. Юридические науки", 2016, № 6, էջ 43:

⁸ Տե՛ս **Горшунов Д. Н.** Доктринальные основы российского частного права: проблемы и перспективы // "Учен. зап. Казан. ун-та". Серия "Гуманит. науки", 2011, № 4, էջ 20:

ճյուղերի գիտական ձեռքբերումների կիրառման և մասնավոր իրավունքի ոլորտում արդյունավետ օրենսդրական փոփոխությունների կատարման վրա:

Խոսելով Հայաստանի Հանրապետությունում իրավունքի զարգացման հիմնական գործոնների մասին՝ որպես այդպիսիք կարելի է առանձնացնել հետևյալները.

1. քաղաքական ուժերի, համապատասխան լիազորությամբ օժտված պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց նախաձեռնություն,

2. վերպետական կառույցների կամ միջազգային կազմակերպությունների պահանջ,

3. հասարակական պահանջ,

4. իրավագետների գիտահետազոտական գործունեություն:

Նշված գործոնները առավելապես կիրառելի են հանրային իրավահարաբերությունները կարգավորող ակտերի ընդունման, փոփոխման կամ լրացման դեպքում, որպիսի գործընթացները հանրապետությունում ընթացել և ընթանում են բավականին ակտիվ, քանի որ արտաքին աղբյուրներից իրականացվում են բավականին խոշոր ֆինանսական հատկացումներ, ինչը խթանում է այդպիսի գործընթացների ակտիվ իրականացումը, դրանց հանրային հնչեղության ապահովումը:

Մասնավոր իրավունքի ոլորտում վիճակը այլ է: Եթե հետադարձ հայացք նետենք վերջին քսան տարվա գործընթացների վրա, ապա կտեսնենք, որ քաղաքական ուժերը մասնավոր իրավունքին վերաբերող ակտերի ընդունման, փոփոխման կամ լրացման նախաձեռնությամբ հանդես են եկել հազվադեպ, այն էլ լայն զանգվածների քիմքին հաճելի լինելու կամ էլ այս կամ այն խոշոր բիզնեսի կամ անձանց խմբի շահերը ապահովելու համար: Պետական մարմինները մասնավոր իրավունքի ոլորտին վերաբերող օրենսդրական փոփոխություններ կատարելու նախաձեռնությամբ հանդես են եկել կամ անգործություն են ցուցաբերել հիմնականում այն դեպքերում, երբ առկա են եղել որոշակի քաղաքական պայմանավորվածություններ, պահանջը ներկայացվել է բանկերի կողմից՝ ՀՀ կենտրոնական բանկի գլխավորությամբ, կամ էլ Հայաստանում գործող որոշ միջազգային և կիսամիջազգային որևէ կազմակերպության: Փաստորեն, վերջին երկու տասնամյակում մասնավոր իրավունքի ոլորտում հանրային պահանջի վրա հիմնված որևէ էական նախաձեռնություն չի իրականացվել, իսկ գիտական հետազոտությունների արդյունքները օգտագործվել են խիստ հազվադեպ:

Եթե ուսումնասիրենք մասնավոր իրավահարաբերությունները կարգավորող մայր օրենքի՝ քաղաքացիական օրենսգրքի մեջ կատարված փոփոխությունների պատմությունը, իհարկե, «Նորմատիվ իրա-

վական ակտերի մասին» ՀՀ օրենքի⁹ ընդունմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը չհիմնավորված կերպով դադարեց այդպիսին լինելուց, ապա կտեսնենք, որ օրենսգրքում կատարված փոփոխությունները հիմնականում ՀՀ կենտրոնական բանկի նախաձեռնությունների արդյունք են՝ ուղղված բանկերի և վարկային կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը: Կամ կառավարության նախաձեռնությամբ կատարվել են ձևական այնպիսի փոփոխություններ, որոնց նպատակն ընդամենը Համաշխարհային բանկի փորձագետների կողմից ամեն տարի կազմվող «Դուինգ բիզնես» սանդղակում Հայաստանի դիրքերը մի քանի կետով բարելավելն է եղել, որի հետևանքով, հիարկե, մեր երկրում բիզնեսի զարգացման համար պայմանները օբյեկտիվորեն չեն բարելավվել, այլ ընդհակառակը՝ այդ փոփոխությունները առաջացրել են բազմաթիվ խնդիրներ թե՛ իրավակիրառ պրակտիկայում և թե՛ իրավունքի տեսության համար: Օրինակ՝ 2008 թվականին կատարված փոփոխություններով Հայաստանի Հանրապետությունում վերացվեց իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալի նվազագույն չափի պահանջը, և Հայաստանը վերը նշված սանդղակում մի քանի կետով բարելավեց իր դիրքերը: Սակայն դրա հետևանքով ունենք իրավիճակ, երբ ստեղծվում են տնտեսական ընկերություններ, որոնք իրենց կենսունակությունը ապահովելու համար նվազագույն միջոցներ անգամ չունեն, ինչը բնականաբար բացասաբար է անդրադառնում քաղաքացիական հարաբերությունների բնականոն ընթացքի վրա: Կամ՝ 2013 թ. նորից վերը նշված խնդիրը լուծելու նպատակով ներդրվեց տնտեսական ընկերությունների գրանցման էլեկտրոնային կարգ, որը թույլ է տալիս սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն կամ փակ բաժնետիրական ընկերություն հիմնադրել քսան բոլորով: Իսկ վիճակագրությունը ցույց է տալիս, որ այդ եղանակով 2013-2015 թթ. գրանցվել է իրավաբանական անձանց ընդամենը 0,5 տոկոսը¹⁰:

Որոշ դեպքերում կատարվել են նույնիսկ մասնավոր իրավունքի դասական ինստիտուտներին հակասող, որևէ տրամաբանության մեջ չտեղավորվող փոփոխություններ: Օրինակ՝ 2014 թ. դեկտեմբերի 17-ին քաղաքացիական օրենսգիրք ներդրվեց «Ապահովված իրավունք» անունը կրող 14.1 գլուխը, որի ներդրումը շարժական գույքի գրավի գոյության պայմաններում, մեր կարծիքով, անտրամաբանական էր և պարտավորությունների կատարումն ապահովելու միջոցների համակարգում որևէ ձևով չի տեղավորվում: Միակ «հիմնավոր» արդարացումը, որ այս նախաձեռնության հեղինակները կարողացան ներկայացնել, այն էր, որ Համաշխարհային բանկը Հայաստանի Հանրապետությո-

⁹ Տե՛ս ՀՀՊՏ 2018.03.28/23(1381):

¹⁰ Տե՛ս <http://91.196.37.214/reg/stat>

յանը այդ փոփոխությունը կատարելու համար տրամադրել էր 100,000.00 ԱՄՆ դոլար դրամաշնորհ:

2014 թվականին ՀՀ արդարադատության նախարարության կողմից ստեղծվեց ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխությունների կատարման հանձնաժողով¹¹, որի աշխատանքներին փորձագետի կարգավիճակով ներառված էին տեսաբաններ և պրակտիկ իրավաբաններ, որոնց կողմից ներկայացվել էին տեսականորեն հիմնավորված և գործնական կիրառման անհրաժեշտություն ունեցող բազմաթիվ փոփոխությունների ու լրացումների առաջարկներ, որոնք վերաբերում էին կորպորատիվ իրավահարաբերություններին, ընդհանուր սեփականությանը, միջազգային մասնավոր իրավունքին և այլն: Առաջարկներ, որոնք հավանության էին արժանացել Եվրոպայի խորհրդի փորձագետների կողմից: Բայց պարզվեց, որ Հայաստանի Հանրապետության մասնավոր իրավունքի զարգացման համար առավել հրատապ էր հարևանային իրավունքի և ուզուֆրուկտի ներդրումը: Նախապատվությունը տրվեց հարևանների՝ միմյանց հանդեպ փոխադարձ հարգանք ցուցաբերելու պարտականության սահմանմանը, իսկ ընդհանուր սեփականությանը, միջազգային մասնավոր իրավունքին կամ կորպորատիվ իրավահարաբերություններին վերաբերող կոնցեպտուալ առաջարկությունները մղվեցին հետին պլան: Դրա հիմնական պատճառն այն էր, որ առաջարկը ներկայացրել էր գերմանական GIZ ընկերության փորձագետը, որի կարծիքով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի էական բացթողումներից է հարևանային իրավունքի բացակայությունը:

Անդրադառնալով աշխատանքային օրենսդրությանը՝ հարկ է նշել, որ դրա զարգացման ուսումնասիրությունը և ոլորտի նեղ մասնագետների կարծիքը ցույց են տալիս, որ այն իր տրամաբանության մեջ ավելի շուտ կարելի է համարել հանրային իրավունքի ոգով տոգորված, մեր կարծիքով՝ խորհրդային ժամանակաշրջանի ազդեցությունից չձերբազատված օրենսգիրք է¹², քան մասնավոր իրավական կարգավորումների վրա հիմնված փաստաթուղթ: Այս ոլորտում չեն նախատեսվում այնպիսի հայեցակարգային փոփոխություններ, որոնց ներդրումը կհամապատասխանի ժամանակակից շուկայական հարաբերություններին բնորոշ իրավակարգավորումներին, կնպաստի օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, առավել արդյունավետ կհավասարակշ-

¹¹ Հարկ է նշել, որ փոփոխությունների կատարման միասնական հայեցակարգ, որպես այդպիսին, բացակայում էր, և փոփոխությունների առաջարկները պայմանավորված էին յուրաքանչյուր փորձագետի սեփական հայեցողությամբ և կանխորոշած շրջանակներով:

¹² Նման իրավիճակ է առկա նաև Ընտանեկան օրենսգրքի մի շարք իրավակարգավորումներում, ինչը, մեր կարծիքով, ընտանեկան օրենսդրության լրջագույն փոփոխությունների օրյեկտիվ անհրաժեշտություն է առաջացնում:

նի գործատու-աշխատող փոխհարաբերությունները:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ մասնավոր իրավունքի զարգացումը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում եղել է հախուռն, իրավիճակային, առանց նախապես մշակված հայեցակարգի, հաշվի չեն առնվել գիտական հիմնավորումները և պրակտիկայում առաջացող օբյեկտիվ խնդիրները: Ներկայումս հատկապես կարևորում ենք հասարակական հարաբերությունների մասնավոր իրավական կարգավորումների վերաիմաստավորումը և հանրային իրավական կարգավորումների հետ հավասարակշռված հարաբերակցության հստակեցումը: Գտնում ենք, որ վերը նշված խնդիրներն առավելագույնս հնարավոր կլինի լուծել միայն այն դեպքում, եթե Հայաստանի Հանրապետությունում մասնավոր իրավունքի զարգացման հետագա իրավական քաղաքականությունը հիմնվի մասնավոր իրավունքի կայուն զարգացման հայեցակարգային և գիտահենք իրավական քաղաքականության վրա¹³, դա թույլ կտա արդյունավետ կերպով հավասարակշռել հանրային և մասնավոր շահերը՝ նպաստելով մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության վրա հիմնված սոցիալական շուկայական տնտեսության կայացմանը:

Բանալի բառեր – *մասնավոր իրավունք, հանրային իրավունք, իրավունքի զարգացում, իրավունքի զարգացման գիտահենք քաղաքականություն*

ВАГРАМ АВЕТИСЯН – Актуальные вопросы развития частного права в Республике Армения. – В докладе обосновано мнение о том, что развитие частного права в правовой системе РА осуществлялось спонтанно, ситуативными решениями, без разработанной концепции и учета научных обоснований и проблем, возникающих на практике. Особое внимание уделено переосмыслению частно-правовых отношений в сфере общественных отношений и уточнению сбалансированных отношений с публично-правовым регулированием. Отмечается, что в дальнейшем для эффективного решения этих проблем развитие частного права должно основываться на концептуальной, основанной на знаниях правовой политике; в результате публичные и частные интересы будут уравновешены.

Ключевые слова: *частное право, публичное право, развитие частного права, разработка политики развития права, основанной на научных знаниях*

VAHRAM AVETISYAN – Actual Issues of the Development of Private law in the Republic of Armenia. – The report substantiates the opinion that the development of private law in the legal system of the Republic of Armenia was carried out spontaneously, by situational decisions, without a developed concept, without taking into account scientific justifications and objective problems that arise in practice. Particular attention is paid to the rethinking of private law relations in the field of public relations

¹³ Գիտահենք քաղաքականություն ասելով նկատի ունենք այն, որ նոր իրավակարգավորումների ներդրումը պետք է ուղեկցվի պատշաճ հայեցակարգերի հիման վրա՝ իրավակարգավորումների պատշաճ գիտական և պրակտիկ փորձաքննության զուգակցմամբ:

and the clarification of balanced relations with public law regulation. It is noted that in the future, in order to most effectively solve these problems in the Republic of Armenia, the development of private law should be based on a conceptual and knowledge-based legal policy, as a result, public and private interests will be effectively balanced, thereby contributing to the development of the private sector, the creation of social market economy based on the right of ownership, freedom of economic activity and economic competition.

Key words – *private law, public law, development of private law, development of a policy for the development of law based on scientific knowledge*